ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԿԱԴԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻՍՐ ԱՐԿԱԴԻ ՂՈՒԿԱՍԵԱՆ
ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

ՍԻՐԵԼԻ ԱՐԿԱԴԻ,

ՍՐՏԻ ԽՈՐ ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԱՆՀՈՒՆ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՄԲ ՈՂՋՈՒՆՈՒՄ ԵՆՔ ՁԵՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ ՈՐՊԷՍ ՆԱԽԱԳԱՀ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ:

ՄԵՐ ՈՂՋ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՀՈԳԵՒՈՐ ԿԵՆՏՐՈՆԻՑ՝ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻՑ ԱՆՁՆԱՊԷՍ ԵՎ ՀԱՆՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒՄ ԵՆՔ ՁԵԶ ԲԱՐՁՐՕՐԷՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՅՍ ՊԱՇՏՕՆԻ ԿՈՉՄԱՆ ԱՌԻԹՈՎ, ԱՐՑԱԽԻ ՄԵՐ ՍԻՐԵՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՄԲ:

ԱՂՕԹՈՒՄ ԵՆՔ ԱՌ ԱՄԵՆԱԿԱՐՈՂ ԱՍՏՈՒԱԾ, ՈՐ ՁԵԶԻ ՇՆՈՐՀԻ ՔԱՋԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ, ԱՆՍԱՀՄԱՆ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ, ԱՆՆԿՈՒՆ ԿՈՐՈՎ ՈՒ ՔԱՋՈՒԹԻՒՆ ՓԱՌԱՒՈՐԱՊԷՍ Ի ԳԼՈՒԽ ՀԱՆԵԼՈՒ ՁԵԶԻ ՎԱՏԱՀ ՈՒԱԾ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ Ի ՍՊԱՍ ԱՐՑԱԽԻ ՄԵՐ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՋԱՏ ԿԱՄՔԻ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԵԱՆ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ, ՋՕՐԱՑՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՈՒ ԱՄՐԱՑՄԱՆ:

ԲԻՒՐ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՄԵՐ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱՒԱՏՔԻ ՕՋԱԽԻՑ՝ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻՑ: ԹՈՂ ԱՍՏԾՈՅ ԱՄԵՆԱՏԵՍ ԱՉՔԸ ՈՒ ԱՄԵՆԱՁՕՐ ԱՋԸ ՀՈՎԱՆԻ ԵՒ ՊԱՀԱՊԱՆ ԼԻՆԵՆ ՁԵԶ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱ-ՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԻ ՎՐԱՅ:

ՀԱՅՐԱԿԱՆ ՍԻՐՈՎ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ,

ԱՂՕԹԱՐԱՐ՝

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

7 սեպտեմբերի